Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

251)

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ—ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Նուէր Յովհաննէս եւ Կարապետ Խալաթեաններից՝ ի յիշատակ իրենց եղբօր՝ պրոֆ. Գրիգոր Խալաթեանի։

16354
9(47.925)
2033
Ա-46
5 OCT 2011
21 SEP 2013

ԳԱԼՈՒՍՏ ՏԷՐ ՄԿՐՏՉԵԱՆ

ԳՐԻԳՈՐ-ՄԱՆԱՃԻՀՐ ՌԱԺԻԿ

ՄԻՀՐԱՆ ՏՈՀՄԻՑ

1005
92432

Առանձնատիպ 1901 *թ-ի «Արարատի» Սեպտեմբեր—Հոկտեմբեր համարից, էջ* 468—474։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի
1902

21 SEP 2013

Дозволено цензурою 22 Января 1902 г. Г. Тифлисъ.

ԳՐԻԳՈՐ—ՄԱՆՃԻՀՐ ՌԱԺԻԿ,
ՄԻՀՐԱՆ ՏՈՀՄԻՑ

1. Գրիգոր ռաժիկի մասին՝ Աւգերեան, · Զամչեան, Յայսմաւուրք, Օրբելեան, Կիրակոս, Սամուէլ Անեցի, Ասողիկ: 2. Ցիզբուզիսի վկայաբանութիւնը Գրիգորի մասին. Նահատակութեան տեղը. Նիխորական, Նաքայես եւ Բնարիկ մարզպաններ: Ցիզբուզիսի նահատակութեան ճիշդ թուականը=553, նոյեմբ. 9. Ցիզբուզիսի վկայաբանն է նրա ընկերակից Ներսես Ռաժիկը: 3. Ներսես Բ-ի թուղթը. յանուն Ռաժիկի վանք Դուինում 547—8 թուին: 4. Մանաճիհր—Գրիգորի նորագիւտ վկայաբանութիւն. Նահատակութեան թուականը=545—6 թուին. Միհրան տոհմ. Երուանդ Վշնասպ Վրաց մարզպան. Մանաճիհրը քրիստոնէութիւն է ընդունում Վրաստանում, նահատակւում է արքունի դրանը: 5. Գրութեան ժամանակի յետնութեան նշաններ. Որդի Ոմզդի=Որդի Կաւատայ, հրով տանջել:

6. Վկայաբանութեան ժամանակը ոչ ուշ 12-դ դարից. A եւ B ձեռագրեր: 7. Գր. Ռաժկի վկայաբանութիւնը պատրերէն. Նահատակութեան թուականը 538 փրկչ. Պիրան—Գուշնասպ=Երուանդ—Վշնասպ? Մանաճիհր անունը հին եւ վաւերական. տարին եւ հայր անյայտ են միմեանցից: 8. Սասանեան պետական օրէնքը կրօնափոխների վերաբերութեամբ. մահուան պատիժ դենափոխներին. ի ծնէ եւ ի մանկութենէ քրիստոնեաները ազատ են. Սակայն Ասորա-

ցակացու եւ Ներսէս ռաժիկի դաստիարակութեան օրինակը: 9. Քրիստոնեաների աշխարհակալեցողութիւնը խղճի ազատութեան մասին. Տակապիլանի ուղերոր կանոնը—մահ ուրացողներին: 10. Մանաճիհրը նեստորական վկայ. Յիզդբուզդը ենթեպս. Յիզդբուզդի թաղումը եւ գերեզմանը, խուժիկների ժողովը, մի խուժիկ մահապարտ: 11 Բնագիր է արդեօք թէ ասորերէնից թարգմանութիւն Յիզդբուզդի վկայաբանութիւնը: 12. Չկայ արդեօք վրացերէն Գրիգոր—Մանաճիհրի վկայաբանութիւն. Ռաժիկն պարսիկ վկայ Վրաստանում: 13. Գրիգոր Պարսկի զրուցախառն պատմութիւնը հայ մատենագրութեան մէջ:

1. Մ. Աւգերեանը իւր Լիակատար Վարք Սրբոցում (Հատ. Ա. էջ 461—467) մի ամբողջ վկայաբանութիւն է շարադրել, հիմնուելով հայ պատմիչների վրայ, Գրիգոր Պարսկին նուիրուած, ուր պատմում է, թէ իբր Գրիգոր—Մանաճիհր ռաժիկը քրիստոնէութիւն է ընդունել Դուինում, ճգնել է այնտեղ մի վանքում և յետոյ 551 թուին նահատակուել է Դենշապուհից: Ինչպէս Զամչեանի, նաև Աւգերեանի աղբիւրներն են եղել Յայսմաւուրքը (2 յունուարի և 25 փետրուարի), Ասողիկ, որի մէջ չկայ որ և է յիշատակութիւն Գրիգոր Պարսկի մասին, Սամուէլ Անեցի, Կիրակոս և Ստ. Օրբելեան: Յայսմաւուրքի պատմածն է. «Յայսմ աւուր (2 յունուար) վկայաբանութիւն սրբոյն

Գրիգորի Պարսկին ի Հայս»,—25 փետր. «Բազումք վկայեցին ի Պարս վասն հաւատոյն Քրիս. ընդ որս և այր մի Գրիգոր անուն մեծաւ համարձակութեամբ վկայեաց» (Յիզդբուզիտի վկայաբանութիւնից): Սամուէլ Անեցին իւր քրոնիկոնում 551 թ. դնում է. «Սուրբն Մանաճիհր՝ որ անուանեցաւն Գրիգոր, ազգաւ ռաժիկ, մարտիրոսութեամբ կատարեցաւ ի Քս.»*: Նոյնը կրկնում է և Կիրակոս՝ «Յառաջին ամի սորա (Մովսէս կաթողիկոսի!?) սուրբն Մանաճիհր, որ անուանեցաւ Գրիգոր, ազգաւ ռաճիկ (= ռաժիկ) մարտիրոսութեամբ կատարեցաւ»: (Աւգ. Լիակ. Վ. Ս. Ա. հատ. և Զամչ. Հայ. Պատմ. Բ. հատ. էջ 255): Ստ. Օրբելեանը թուելով հայոց եկեղեց. ժողովները՝ գրում է. «Գ. դարձեալ ժողով ի Դվին յաւուրս Ներսիսի կաթողիկոսի, որ վասն քաղկեդոնական սահմանին և Նեստորի աղանդոյն, որ ի պղծալից վանքն Գրիգորի Մանաճիհր ըռաժկի, ընդ որում էր երանելի մետրապօլիտն Սիւնեաց Պետրոս՝ աշակերտ Մովսիսի Քերթողի» (Ստ. Օրբել. Պատմ. Նահանգ. Սիւնեաց, Փարիզ 1859, Հատ. Բ. էջ 201 [գլ. կթ.]):

---

* Սամ. էջ 74, Վաղարշապատ. 1893.

2. Յիզտբուզիտի ընդարձակ և վաւե- րական վկայաբանութեան մէջ (Վարք և Վկ. սրբ. Վենետ. 1874, Հատ. Բ. էջ 124—130) խրողութիւնը բոլորովին այլ տեսակ է ներկա- յացուած: Պարսից՝ Կաւատի որդի Խոսրով Թագաւորի ժամանակ Մախոշ անունով մոգը պատահմամբ հանդիպում է արքունի բանակը. «Սա [=Մախոշ] ի դիպուածոյ իմէքէ ի բանա- կըս Թագաւորին հասանէր և պատահէր չար- չարանաց սուրբ վկայի ուրումն՝ որում անուն էր Գրիգորիոս: Հրաշացեալ ընդ համբերատարու- թիւն նահատակին ․․ յայնմհետէ զղջմամբ ունէր զմոգութիւնն: Գայր անտի (Թագաւոր- ական բանակից) յաշխարհն Սիւնեաց, պա- րապելով յունկնդրութիւն գրոց սրբոց, և լեալ անդ սակաւ ամիս՝ հասանէ ի Հայս. և եկեալ յԱյրարատ գաւառ՝ բնակէր յոստանին Հայոց ի Դուին»: Ուրեմն Գրիգոր Պարսկի մարտիրոսութեան տեղը «արքունի բանակն» է, որտեղից Մախոշը գնում է Սիւնիք, այն- տեղից «ի Հայս» = Այրարատեան գաւառը, Դուին ոստանը: Այդ ժամանակ «Հայոց իշ- խանն» էր Նիխորականը (էջ 126) Նիխորա- կանին յաջորդում է «Նախապետ»: Երեք տա- րի յետոյ «Նախապետին» յաջորդում է Քնա-

րեկ: Քիչ յետոյ Պարսից Թագաւորը ուղար- կում է Հայաստան «երիս իշխանս հաւատա- րիմս այց առնել երկրին, անուն միումն Նա- տոյ՝ որ կոչի Դրովանգական, և երկրորդին Պերոզ, որ էր Ռէոյ գաւառին մոգպետ, և եր- րորդին Խոյապ՝ որ էր սպասաւոր արքային. որք եկեալ ի Հայս բազում ուղղութիւնս արարին» (էջ 127): Մախոշ—Յիզտիբուզիտը նահատակւում է «ի քսաներորդի երրորդի ամին Խոսրովու Թագաւորի, որ օր երկու էր քաղոց ամսոյ, յաւուր կիւրակէի յերրորդ ժամու»* (էջ 130): Վկայաբանութեան հեղի- նակն է Ներսէս Ռաժիկը, որ բանակից էր Մախոշին—«Եւ ես Ներսէս չարչարակից և ընկերակից [այլ օր. ընկեր] սրբոյն արարի զպատմութիւնս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ» (Տես Յայսմաւուրք, նաև Տաշ. Ցուց. էջ 77, 564): Յայսմաւուրքի այս յիշատակա- րանն անշուշտ ծագում է նախնական բնագ- րից, թէև չէ պահուած ընդարձակի (Վարք և Վկ.) մէջ:

---

* Խոսրով Ա-ի թագաւորութիւնը ըստ Նէօլդէկէի՝ 531—579 թուին է, ուրեմն այդ թագաւորի 23-դ տարին համապատասխանում է փրկչական 553—4 թուին: Կոնի- բիրը Յիզտբուզիտի վկայաբանութեան անգլերէն թարգմա-

3. Մի ուրիշ ժամանակակից վաւերագիր աւելի եւս պարզում է խնդիրը: Ալիշանը մէջ է բերում Ներսէս Բ-ի թղթերից հատուածներ Խուժիկ Նեստորականների մասին. «Որք եկեալ բնակեցան յաշխարհիս մերում պատ-

նութեան մէջ 23-ի փոխանակ դնում է 43, որով եւ Յիզտբուզիտի նահատակութիւնը փրկչական 574 թուին (տես Monuments of Early Christianity. London, 1894. Acts of Hiztibouzit, էջ 257): Սակայն այդ ամենեւ սխալ է: Նահատակութեան ճիշտ թուականն է 553 փրկչական: Այդ տարի նաւասարդի մէկը, ըստ հայ շարժական տօմարի, ընկնում է յուլիսի 11-ին: Խաղոցի 2-ը տօմարական տարուայ 122-դ օրն է, ուրեմն 553 թուին խաղոցի 2-ը համապատասխանում է նոյեմբերի 9-ին [21 օր յուլիսից + 31 օգոստ. + 30 սեպտ. + 31 հոկտ. + 9 նոյեմբ. = 122]: Եւ իսկապէս 553 թուին նոյեմբերի 9-ը ընկնում է կիւրակէ օր [ս. Հովուեան ցուցակ, Արարատ, յուլիս 1898], ինչպէս որ շատ ճիշտ գրում է վկայաբանը՝ «որ օր եղեւ էր խաղոց ամսոյ, յաւուր կիւրակէի, յերրորդ ժամու»: Ուրեմն նահատակութեան ճշտագոյն թուականն է 553 թ. նոյեմբերի 9-ը, կիւրակի օր, ժամը՝ ըստ այժմեան, առաւօտեան, հաշուի՝ ինընին: Ժամանակագրական մանրամասնութեանց այսպիսի ճշգրտութիւնը զօրեղ ապացոյց է, որ Ներսէս ռամիկը ժամանակակից եւ ականատես գրող է, ինչպէս որ նաեւ վկայում է ինքը: Այսպիսով բարձրանում է եւ վկայաբանութեան արժէքը իբրեւ պատմական վաւերագրի՝ վեցերորդ դարու կիսից:

ճառաւ վաճառականութեան, եւ այժմ չարահնար պղծալից անիծաբեր արուեստիւ իւրեանց՝ յոգիս մեր աղտեցին. մինչեւ իւրեանց պղծութեան հաւատոյ աշակերտ չեպիսկոպոս անեալ»: Միւս թղթից. «Յեօթեւտասներորդի ամի Խոսրովու արքայից արքայի (=547-8 ամ Փրկչին), ի մարզպանութեան Նիհորական (=Նիխորական), արարին իմն շինուած յանուն Մանաճրհի Ռաժկի, որ հաւատացեալ ի Քրիստոս եւ մկրտեալ անուանեցաւ Գրիգոր, եւ սպանաւ վասն Նորին հաւատոյ. եւ ապա անուանեցին զնա տեղի ժողովոյ պղծութեան իւրեանց. (յոր հրապուրեալ որսային եւ զոմանս ի Հայոց) ...Զայս աղէտ հոգեւոր տեսանելով հասաք, թէպէտ եւ անագան, ի վերայ պատճառող սուտութեան նոցա ... Իսկ մեր ոչ կարացեալ համբերել այսպիսի չար գործոց նոցա...քանդեալ աւերեցաք զտեղի ապաւինի անօրէնութեան նոցա, եւ բարձաք ի մէնջ զգիշերային զայն խաւար (Այր. 413—4):

Այս հատուածներից հետեւում է, որ արդէն 547-8 թուին շինւում է Դուինում խուժիկների վանք յանուն Գրիգոր ռաժկի, ուրեմն եւ ռաժկի նահատակութիւնը այդ թուից առաջ է*:

* Այժմ ունինք արդէն Ներսէս Բ-ի թղթերի ամ-

4. Ներքեւում հրատարակուող փոքրիկ վկայաբանութիւնը տալիս է մեզ Գրիգոր— Մանաճիհրի նահատակութեան թուականը և մի քանի կարեւոր մանրամասնութիւններ:

Ըստ այս վկայաբանութեան Մանաճիհրը նահատակւում է Խոսրովի 15-դ տարում = փրկչական 545—546: Նա «ազգաւ ռաժիկ» էր, այսինքն Պարսկաստանի Ռէ քաղաքից **, իսկ ցեղով նշանաւոր Միհրան տոհմից, որ Պարսկաստանի ամենանշանաւոր տոհմերից մէկն է: Մանաճիհրը ոչ թէ վանական էր Դուինում, այլ զինուորական էր Վրաստանում, որտեղի մարզպանն էր այն ժամանակ Երուանդ Վշնասպը: Քրիստոնէութիւն ընդու-

բաղդատական հրատարակութիւնը, տես Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901, եջ 70—75: Այս հրատարակութիւնն ունի աւելի լաւ ընթերցուած՝ «վաճառաշահութեան» (փոխ. վաճառականութեան): Տալիս է նաեւ խուժիկների վանքը հանդերձ թուականը՝ «ի հանն եւ յորրորդ ամի Խոսրովու արքայից արքայի, ի սուրբ (ի) հառաներորդացն, ի կիւրակէի իւղոզմենին» (եջ 72): Ուրեմն՝ փրկչական 554 թուին՝ ծաղկազարդի կիւրակին: (ծանօթ. սրբագրութեան):

** Ռէ քաղաքի մասին տես Armen. Gram. Հիւբշմանի, Ա. մաս, եջ 70, ուր եւ վկայութիւններ Սեբէոսից, Խորենի. Աշխարհագրութիւնից եւլն: Ռէ—պարսկերէն եւ ասորերէն Ռայ, Մարաստանի մայրաքաղաքն էր

նեց Վրաստանում, ուր և կրեց առաջին չարչարանքները՝ գլխիվայր բրածեծ լինելով և գլխի ոսկրը ջարդուելով: Նահատակուեց «արքունի դրանը», բանակից ոչ հեռու:

5. Այս թանկագին տեղեկութեանց հետ վկայաբանութիւնս ունի և մի երկու կոպիտ սխալներ, որ գրութեան ժամանակի յետնութեան նշաններ են:

Սխալ է վկայի ժամանակակից Խոսրով Թագաւորին համարել Որմզդի որդի, այլ պէտք է լինի՝ «որդի Կաւատայ», ինչպէս որ և իսկապէս ունի Յիզտբուզտի վկայաբանութիւնը: Աւելի մեծ սխալ է կարծելը թէ կրակապաշտ պարսիկները քրիստոնեայ վկաներին տանջում էին նաև հրով (տես տ. 21, «բազում տանջանաց համբերէին՝ սրոյ և հրոյ»): Օրին. Շապուհի հալածանքների ժամանակ քրիստոնեաների վրայ գործ դրուող բազմաթիւ չարչարանքների թւում չկայ կրակը և չորրորդ դարու վկայաբանից բացորոշ վկայութիւն ունինք, որ ասում է. «բայց ի միջէ միայն խորամանկութենէ, զոր եմոյծ ազատութիւն յաշխարհ, պահեցին զերանելի սուրբսն, զի հրով զնա ոչ այրեցին, քանզի զհուրն պաշտէին» (Սրբհ. Խոսրով. էջ 31, իմ հրատարակութիւնը):

6. Այս նկատողութիւններից հետեւում է, որ մեր այս վկայաբանութիւնը չէ կարող գրուած՝ կամ աւելի հաւանականաբար ընդարձակից համառօտուած՝ լինել Սասանեան տիրապետութեան ժամանակ, այլ շատ աւելի ուշ, մահմետական տիրապետութեան շրջանում, երբ սովորական էր նաեւ հրով տանջել: Բայց այսուամենայնիւ չէ կարող ուշ լինել 12-դ դարից, որովհետեւ մեր երկու ձեռագրերը՝ A եւ B, նոյն այդ դարու վերջից են: A եւ B ձեռընտիրները՝ թուղթ, սորին երկաթագիր, մանրամասն նկարագրուած են մեր մի այլ աշխատութեան մէջ: (Տես Ագաթ. Աղբիւրներից. Վաղարշապատ, 1896, էջ 42—60):

7. Գրիգոր ռաժկի վկայաբանութիւնը կայ եւ ասորերէն, ընդարձակ եւ մանրամասն տեղեկութիւններով (Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer, G. Hoffmann, Լէյպցիգ, 1880, էջ 78—86): Հայ եւ ասորի վկայաբանութեանց տարբերութիւնը՝ բացի ասորու ընդարձակ եւ մանրամասն իսկ հայի կրճատ լինելուց՝ այն է, որ ասորին Գրիգորի հեթանոսական անունը դնում է ոչ Մանաճիհր, այլ Պիրան - Գուշնասպ, որ հայերէնում պիտի լինէր Վշնասպ վերջաւորութեամբ մի

անուն, իսկ նահատակութեան թուականը՝ Անուշիրուան Խոսրովի 10-դ, յունաց 850 թուականը, որ է փրկչական 538 թ-ը, ուրեմն հինգ տարով հայից կանուխ: Ասորին չունի նաեւ Վրաստանի մարզպան Երուանդ Վշնասպի անունը, թէեւ ճոխ է Վրաց, Ազուանից եւ Եգերաց աշխարհների մասին տեղեկութիւններով: Ասորին Պիրան-Գուշնասպին համարում է Հիւսիսի մարզպան (=Gouverneur über die Grenze und Mark des Nordens), Գուրգան եւ Առան, այսինքն է՝ Վրաց եւ Ազուանից աշխարհներում: Մինչդեռ հայը Երուանդ Վշնասպ է անուանում մարզպանին, եւ այս Վշնասպն է Մանաճիհր—Գրիգորին առաջին չարչարողը: Թւում է թէ երկու բնագրերում Պիրան-Գուշնասպ եւ Երուանդ-Վշնասպը նոյն անձը պիտի լինին, բայց Երուանդը պարսկերէնում պիտի լինէր Արուանդ եւ ոչ Պիրան: Մեզ թւում է որ հայ բնագրի տեղեկութիւնը պիտի լինի ուղիղը, քանի որ Գրիգորի Մանաճիհր անուան մասին ժամանակակցի վկայութիւն ունինք Ներսէս Բ-ի թղթում: Ասորի եւ հայ վկայաբանութիւնները միմեանցից անկախ են:

8. Գրիգոր ռաժիկը ինչպէս եւ Յիզտբու-

զիտը զոհ գնացին ոչ թէ քրիստոնեաների դէմ ընդհանուր հալածանքի, այլ Սասանեան պետական այն օրէնքի գործադրութեան, որով արգելւում էր մազդեզականին «դենափոխ լինել», այսինքն ուրիշ կրօնի դառնալ. ճիշտ այնպէս, ինչպէս քրիստոնեայ շատ ազգութեանց մէջ զանազան պատիժների սպառնալիքով արգելւում էր տիրող կրօնքից և դաւանութիւնից հրաժարուիլը, կամ ինչպէս՝ նոյն իսկ այժմ՝ տիրող օրէնքի զօրութեամբ արգելւում է ռուս պետութեան մէջ՝ քրիստոնեային ոչ—քրիստոնէական կրօն ընդունելը և մանաւանդ պետական կրօնին՝ պրաւոսլաւ դաւանութեան պատկանողին՝ նաև որևէ այլ քրիստոնէական դաւանութեան դառնալը: Այս օրէնքի հիման վրայ էր օրինակ, որ Յիզաբուզիտի բանտակիցներից Ներսէս Ռաժիկը և Սահակ Աարպատականցին, կարողանալով ապացուցանել «ի մանկութենէ» իրենց քրիստոնեայ լինելը՝ ազատւում են. «Ասէ մոգպետն ցՆերսէհ՝ Ընդէ՞ր եղեր քրիստոնեայ:—Ասէ երանելին. Մայր իմ քրիստոնեայ էր, և ի տղայութեանն էի հաւատացեալ ի Քրիստոս, չգիտեմ բնաւ զձեր դենդ: Հարցեալ և ընդ Սահակ, և նա ասէ. Ի տղայութեանն լեալ էի քրիստոնեայ»

(Վրք. և Վկ. էջ 128): Ուստի և մեր հրատարակած այս վկայաբանութիւնը՝ համաձայն է պատմական ճշմարտութեան՝ երբ հալածուած է համարում միայն «նորահաւատներին» — մազդեզականութիւնից քրիստոնէութիւն ընդունողներին, որոնց մասին պարսիկ պետական օրէնքը երբեմն զանցառութեան էր տրւում և երբեմն խստիւ գործադրւում էր:

9. Ուշադրութեան արժանի է և այն, որ կրօնական ազատութիւնը սահմանափակող այս օրէնքը հազիւ թէ հակասէր քրիստոնեայ հպատակների աշխարհահայեցողութեանը, որովհետև խղճի ազատութեան մասին նոյն տեսակէտն ունէին և քրիստոնեաները: Քրիստոնէութիւնն ուրացողներին մահ սպառնացող Շահապիվանի կանոնը անհերքելի ապացոյց է, որ այս կէտում ոչնչով չէին տարբերւում քրիստոնեաները մազդեզականներից: Շահապիվանի Ը-դ կանոնն ասում է. «Եթէ ոք ի կախարդութեան դացի կամ յո—րայո—ընէան և կամ յայլ ի չար գործս, և ի զղջումն և յապաշխարութիւն ոչ եկեսցեն՝ ըստ Գրոց հրամանի քարկոծ լիցին ....»:

Հին—Կտակարանի վրայ հիմնուած այս կանոնը՝ անշուշտ նոյնչափ հեռու է աւետա-

բանի ոգուց, որչափ որ մօտ է մոգական օրէնքին, որի լոկ անդրադարձութիւնը կարող է համարուել: Ուրեմն՝ հակառակ մեր մի կարգ գրողների կարծեաց, հինգերորդ դարի հայերը խղճի ազատութեան խնդրում հազիւ թէ տարբերուէին տիրող պարսիկներից:

10. Թւում է թէ Մանաճիհրը, թերեւս նաև Ցիպրուղիտը* նեստորական վկաներ էին, յամենայն դէպս նաև նեստորականներից առանձնապէս յարգուած: Վերեւում տեսանք թէ ինչ լեզուով է խօսում Ներսէս Բ Կաթողիկոսը: Մանաճիհր—Գրիգորի եկեղեցին կամ վանքը անուանում է «շինուած իմն», նեստորականների եպիսկոպոսին «պղծութեան հաւատոյ առաջնորդ և չեպիսկոպոս» էլն:

* Առանց աղբիւրը նշանակելու Ալիշանը մեզ է բերում հետեւեալ հատուածը. «Եւ բարձեալ զսուրբ մարմինն սրբոյ Մարտիրոսին՝ մեծի հայրապետին Ներսիսի, բովանդակ եպիսկոպոսօք եւ գներիւք եկեղեցւոյ, եդին մերձ ի սուրբ եկեղեցին կաթողիկոսարանին, յարեւելից կողմանէ, շինեալ ի վերայ վկայարան սուրբ՝ կոփածոյ քարամբք» (Այր. 406): Թէ կաթողիկոսի անունը եւ թէ տեղագրական մանրամասնութիւնները ցոյց են տալիս, որ շատ լաւ աղբիւրից է: Ցիպտրուղտի նահատակութիւնը նեստորական խուժիկների հալածուելուց եւ նրանց ժողովատեղին քանդուելուց առաջ է:

Իսկ Ցիպրուղիտի վկայութեան ժամանակ տեսնում ենք թէ ինչպէս է վարւում մի մահապարտ «ի ժողովն Խուժկաց» [համեմատիր վերեւում առաջ բերուած Ներսէս Բ-ի խօսքերը՝ «և ապա անուանեցին զնա փեղէ ժողովոյ պղծութեան խուժանաց»]: Ահա այդ հատուածը՝ «Դիպեցաւ ի նմին աւուր հանել ի փայտ երկուս մահապարտս, զորս և հանին իսկ ընդ նմա. մինն էր ի ժողովն Խուժկաց, զոր ածեալ ի փայտն՝ համբուրէր զոտս սուրբ վկային [Ցիպրուղտի] և առեալ հող արիւնախառն որ ի կաթուածոյ վկային՝ ընկենոյր ի ծոց իւր»:

1005 / 92432

11. Հարց է ծագում մեր կարծիքով թէ արդեօք Ցիպրուղիտի վկայաբանութիւնը, որի մէջ մանրամասն յիշւում են պարսիկ մարզպանները, պաշտական անուններ և տեղեկութիւններ, որ մեզ յայտնի չեն ուրիշ աղբիւրներից, և որի մէջ չէ յիշւում ժամանակակից Հայոց կաթողիկոսը, որ նստում էր նոյն իսկ Դուինում, բնագիրն է արդեօք, թէ թարգմանութիւն ասորերէնից: Ներսէս Աժիկը թէև հարկաւ կարող էր իմանալ հայերէն, բայց հաւանական է թւում, որ նա գրած կլինէր ասորերէն իւր կրօնակիցների համար,

յետոյ միայն այդ վկայաբանութիւնը կթարգմանուէր հայերէն: Ուստի և որոնելու է, թէ չէ՞ պահուած ասորերէնում որ և է հետք Յիզտբուզիտի վկայաբանութիւնից:*

12. Եթէ ոչ Յիզտբուզիտի,* գոնէ Մանաճիհր—Գրիգորի վկայաբանութիւնը յայտ-

* Ուսուցչապետ Մառի ինձ գրած նամակից (1902, փետ. 5) տեղեկանում եմ, որ Յիզտբուզիտի վարքից ասորերէնում պահուել է միայն մի քանի տող: Տե՛ս այս մասին մեծապատիւ հայագէտի «Изъ Поѣздки на Аѳонъ» էջ 23, ուր ասուած է. «На сирійскомъ сохранилось нѣсколько строкъ о магѣ Iезидбозидѣ». Ուսուցչապետի սոյն այս գըրուածքից տեղեկանում ենք նաև Յիզտբուզիտի մասին եղած յիշատակութեանը յունարէնում (Մենանդր Պրոտիկտոր, Anthologia graeca): Տասներորդ դարում վրաց Արսէն կաթողիկոսը յիշում է Յիզտբուզիտի վկայաբանութիւնը, վերջապէս Մառը Աթոնում գտաւ վրացերէն մի մագաղաթեայ ձեռագրում, տասներորդ դարի գրչութիւն, 14 վկայաբանութիւն թարգմանուած հայերէնից, որոնց մէջ և Յիզտբուզիտի ընդարձակ վկայաբանութիւնը, ճիշտ մեր ունեցած հայ բնագրի թարգմանութիւնը, տես մանրամասն անդ, էջ 15-24: Այս բոլորը պատրաստւում է տպագրութեան Մառի կողմից: Վրացերէնում կայ նաև Ռաժդէնի վկայաբանութիւնը՝ ուսուցչապետի կարծիքով՝ նորագոյն խմբագրութեամբ: Յիզտբուզիտի վրացերէն թարգմանութեան Զ-ի մասին տես և Н. Марръ, Агіографическіе Матеріалы по грузинскимъ рукописямъ Ивера. СП. 1900, մանաւորապէս էջ 64:—Օգտւում ենք առիթից

նի պիտի լինէր և վրացիներին, քանի որ Գրիգորը, ինքը նշանաւոր Միհրան տոհմից, եթէ ոչ մարզպան, ինչպէս գրում է ասորին, այլ գոնէ նշանաւոր զինուորական պաշտօնավարում էր Վրաստանում և այնտեղ ընդունեց քրիստոնէութիւն, նոյն երկրումն էլ կրեց առաջին չարչարանքները իւր նոր հաւատի համար: Վրաց Պատմութեան մէջ յիշւում է մի պարսիկ վկայ. «Եւ շինեաց Վախթանգ եկեղեցի ի Նիքօզ՝ ի վերայ վկայարանին Րաժդենոյ՝ պարսիկ սնուցողի առաջին կնոջն Վախթանգայ՝ որ հաւատաց ի Քրիստոս, և ի Պարսից բռնադատեալ վասն հաւատոյն՝ ոչ ուրացաւ զՔրիստոս, և սպանին զնա ի բարի դա-

յիշելու, որ Ներսէս Բ.-ի նամակը խուժիկների մասին, հրատարակուած է եղել նաև «Արարատում» որ վրիպել է մեր ուշադրութիւնից, մի հիւանդ և բազկաթոռին գամուած մարդու ուշադրութիւնից, որ կարողանում է աշխատել և գրականութեանը հետևել միմիայն երկարատև ընդհատումներով: Թւում է թէ հարկաւոր է բացատրել և այն, որ «ծանօթութիւն սրբագրութեան» կամ «ծանօթութիւն արտատպութեան» ասելով պէտք է հասկանալ իմ աւելացրած ծանօթութիւններս սրբագրութեան կամ արտատպութեան ժամանակ (=note de correction), և ոչ որ է ուրիշ մարդու կամ սրբագրչի (Հմմտ. «Արարատ» 1901, նոյեմբ.—դեկտ. էջ 513): (Ծանօթութիւն արտատպութեան):

ւանութեանն խրում՝ ի փառս Քրիստոսի Աստուծոյ, և ի տեղւոջ վկայարանին նորա եղաւ աթոռ եպիսկոպոսի» (Վենետ. 1884, էջ 91). բայց դժուարանում ենք ասել, թէ այս պարսիկ Բաժդենը կարո՞ղ է արդեօք որ և է կապ ունենալ Գրիգոր Ռաժիկի հետ:

13. Ի վերջոյ մեզ մնում է ամփոփել, թէ ինչպէս է ծագում և զարգանում հայ գրական հողի վրայ Պարսիկ Գրիգորի վկայաբանական գրոյցը, որի պատմական միջուկը այն միակ իրողութիւնն էր, որ Դուինում Մանաճիհր-Գրիգորի անունով եկեղեցի է եղել: Յայսմաւուրքը միամտաբար Գրիգոր Պարսկի վկայաբանութիւնը դնում է «ի Հայս», հեռացնելով անշուշտ Դուինի եկեղեցու անունից: Սամուէլ Անեցին տալիս է նահատակութեան սխալ թուականը՝ 551, և որովհետև այդ թուին է դնում Սամուէլը՝ ժամանակագրական վրիպակով՝ Մովսէսի կաթողիկոսութիւնը, ուստի և Կիրակոս Գանձակեցին կապում է Մովսէսի կաթողիկոսութեան առաջին տարին Մանաճիհրի նահատակութեան հետ. նոյնը և Յայսմաւուրքը: Մի երկու քայլ աւելի առաջ է գնում Չամչեանը Մանաճիհրին տանելով Դուին՝ «էր ի քաղաքի անդ ի Դուին այր մի ազգաւ

ռաժիկ՝ Մանաճիհր անուն» և Աստղիկից յիշուած Գենշապուհ մարզպանին վերագրելով Մանաճիհրի նահատակութիւնը, անշուշտ ժամանակագրական մեծ վրիպակով: (Տես Աստղ. էջ 84, ՍՊ. 1885): Այսպիսով պատրաստ էր ամբողջ ցանցը՝ տեղը, ժամանակը, նահատակը, նահատակողը, մնում էր միայն հիւսել և զարդարել: Այդ էլ արդէն յանձն պիտի առնէր ի պաշտօնէ Մկ. Աւգերեան իւր Լիակ. Վարք Սրբոցում (Ա, 461): Այստեղ Մանաճիհրը արդէն ոչ միայն Դուինումն է մկրտւում և յանուն Լուսաւորչի Գրիգոր կոչւում, այլ և քահանայ է, և փառքն իւր անունն տանում է այդ նշանաւոր կրօնաւորից: Բայց վանքի միաբանութեան մէջ տարածւում է նեստորականութիւն, և որովհետև մեր եկեղեցում տօնուած սուրբը չէ կարող նեստորական լինել, ուստի և ինքը՝ Մանաճիհր—Գրիգորն է մատնում Ներսէս կաթողիկոսին իւր միաբանակիցների նեստորական մոլորութիւնը: Նեստորականները հալածւում են: Վերևն յիշուած Գենշապուհը՝ իբր թէ ընդհանուր հալածանք է յարուցանում քրիստոնեաների դէմ Հայոց աշխարհում և նահատակում է Մանաճիհրը Յայսմաւուրքի

նշանակած յունուարի երկուսին 551 թուին, ժամանակակից լինելով երեք կաթողիկոսի, Ներսէսի, Յովհաննէսի (Գաբեղենից) և Մովսէսի:

Այժմ այս բոլորը ջուրն է ընկնում:

Հարկաւ այստեղ կեղծման մասին խօսք չէ կարող լինել, քանի որ Զամչեան և Աւգերեան տալիս են իրենց աղբիւրները, սակայն օրինակը ուսանելի է և խրատաշատ: Ահա թէ ինչպէս է շատ անգամ գրւում պատմութիւնը, հիմնուած լոկ միամիտ յաւելումների, խախուտ ընդհանրացումների և անփաստ ընդլայնումների վրայ:

Գալուստ Տէր Մկրտչեան

15 Նոյեմբ. 1901:

A 369բ—370ա B 282բ—283ա

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՊԱՐՍԿԻ*

Ի հինգետասաներորդի ամի թագաւորութեան Խոսրովայ որդւոյ Որմզդի Պարսից արքայի ել հրաման յարքայէ ընդ ամենայն գաւառս իշխանութեան իւրոյ, որպէս զի զորս գտցեն յազգէ Պարսից խոստովանեալ ի Քրիստոս՝ կա-

* Զանց ենք առնում նշանակել յ-երի բացակայութիւնը, օրին. «վկաութիւն, Խոսրովա, որդւո, արքաի» և այլն: Չենք նշանակում նաև ե=է, օրին. «յարքաե, որպես, յազգե» և այլն:

2 B ի հնկետասաներորդի B թագաւորութեանն 3 B Խոսրովա 7 B խոստովանել B կալ-

լեալ արգելցեն ի բանդ և խիստ տանջանօք բռնադատեսցեն, զի ուրացեալք զաստուածպաշտութիւն երկրպագեսցեն արեգական և պաշտեսցեն զհուր:

Եւ ի հասանել այսպիսի հրամանի առ գաւառս տեղեաց տեղեաց՝ խռովութիւն յոյժ լինէր սրբոց եկեղեցւոյ և տրտմութիւն մեծ, զի յամենայն գաւառս ունելով ի նորահաւատիցն՝ սաստիկ և դառն տանջանս ի վերայ հասուցանէին, որոց ժամանեալ աստուածային աւգնականութիւնն կարծրացուցանէր զսիրտս նոցա ի ժուժկալութիւն, յորմէ բաղում տանջանաց համբերէին՝ սրոյ և հրոյ, և խեղդման և փայտի, բարի ընթացիւք կատարեալ զկարս կենաց իւրեանց:

Յայնում ժամանակի այր մի, որոյ անուն էր Մանաճիհր, աշխարհաւ Ռաժիկ, յազգէ որ կոչի Միհրան. սա էր ի զինուորութեան ի Վրաց աշխարհին և յուսացեալ յաստուած երկնի և երկրի, ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, և

եալք 12 B այսպիսւոյ 14 B եկեղեցւո 18 B ժամանել ած 23 A կատարել 24 B որում 25 B մա-

անուանեալ Գրիգորիոս, զոր սուրբ Հոգին կարգեալ էր ի դասս զուարթնոցն։

Այս երանելիս Գրիգորիոս բազում տանջանս կրեաց ի Վրաց մարզպանէն, որոյ անուն էր Երուանդ Վշնասպ։ Բանզի կախեալ զսուրբն գլխիվայր բրածեծ առնէին և ի գեղարանացն գլխոյն ոսկրն բեկանէր։ Եւ այսպէս անողորմ դատեալ զսուրբն՝ ոչինչ կարաց անաւրէնն խախտել զհաստատութիւն հաւատոյ նորա։

Ապա խորհեալ վասն նորա, զի էր այրն երևելի, առաքէր զնա կապանաւք ի դուռն արքունի։ Եւ հասեալ սրբոյն ի բանակն՝ յանդիման լինէր մոգպետին։

Եւ ուսեալ եթէ բազում ինչ չարչարեալ սրբոյն չուրացաւ՝ մտեալ յարքունիսն հարցանէր վասն սրբոյ վկային զարքայն, թէ որպէս տացէ հրաման սպանանել զնա։

Պատասխանի ետ Թագաւորն և ասէ. Մի այր տաս սպանանել և բազում

նաճիրհ 31 A զըւարթնոցն 32 A երանեւ 37 B անողորմն դատել 42 B արքային 43B մոքպետին

քրիստոնեայս առնել, զի ի նորա մեռանելն բազումք թողուն զմեր դենս և դառնան յաստուած նոցա։

Ասէ մոգպետն առաջի Թագաւորին. Զաւագ այր տոհմիկ որ լինի դենակրոյս ո՛չ հրամայեն ապրեցուցանել մեր աւրէնքն։

Եւ ընկալաւ հրաման յարքայէն սպանանել զերանելին։ Եւ ելեալ նստէր ամենայն նախարարաւքն դատել զսուրբն։ Եւ ածեալ առաջի՝ խոստանայր նմա պարգևս և պատիւս մեծամեծս, զի ուրասցի զճշմարիտ հաւատս և երկրպագեսցէ տարերց՝ արեգական և լուսնի և ջրոյ և հրոյ. ապա թէ ոչ դառնայցէ՝ սպառնայր ի վերայ նորա ածել տանջանս անհնարինս և մահ դժնդակ։

Իսկ սուրբն Գրիգորիոս առաւել համարձակեալ բարձր ձայնիւ ուրանայր զբազմաստուածութիւն նոցա և խոստովանէր զհաւատս Քրիստոսի որդւոյն Աստուծոյ բարձրելոյ որ յանուն Հաւր և

51 B մեռանելն 61 B ածել 63 B հաւատն 65 B ապայ 67AB դժընդակ 68B համարձակել 70 B նոցայ 71 B զհաւատսն 72 A բարձրելւո

Որդւոյ և Հոգւոյն սրբոյ միասնական Երրորդութեանն, բարձրաբարբառ աղաղակելով խոստովանէր յանդիման ամենայն պարսկական մոգակոյտ հրապարակին։

Ցայնժամ հրամայեաց մոգպետն մոգուցն հաւատարմաց տանել զսուրբն Գրիգոր ի զատական տեղի մի և սրով սպանանել։

Եւ նոցա տարեալ զսուրբն ի տեղին՝ գլխատեցին զնա մինչդեռ փառաւորէր զամենասուրբ զԵրրորդութիւնն, զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, որում և մեք երկրպագելով զովութիւն մատուցուք մեծի իշխանութեանն, զի նմա վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեան յաւիտենից. ամէն։

---

82 B տարել 86—89 B մատուսցուք գոհութիւն, աւրհնութիւն և փառք, յաւիտեան յաւիտենից ամէն։

Էջ 3 տող 1 Մանճիհր=Մանաճիհր

Հայաստանի Ազգային գրադարան
NL0421537